ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Հարկ վճարողի օրվա առթիվ

19.04.2023

Արմավիրի մազի հարգելի՛ բնակիչներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հարկ վճարողի օրվա առթիվ:

Հարկատուների և հարկային մարմնի միջև գործընկերային հարաբերությունների զարգացումը և օրինապահ հարկ վճարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծումն առաջնային է պետության զարգացման համար:

Վստահ եմ, որ ձեր բարեխիղճ վարքագիծը, օրինապահությունը և հարկ վճարելու մշակույթի առավել արմատավորումը մշտապես արժանանալու է պետության խրախուսանքին և աջակցությանը:

Ուստի պետք է ամրապնդել արդեն իսկ կայացած համակարգը, խրախուսել հարկերի կամավոր վճարումը, ձևավորել հարկային կարգապահության ընկալման նոր մշակույթ՝ առավել հաստատուն դարձնելով հարկ վճարողի ինստիտուտի գոյությունը, որը պետության առաջընթացի գրավականներից մեկն է:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ օրվա առթիվ՝ ցանկանալով խաղաղություն, արժանապատիվ աշխատանք և հաջողություններ՝ ի նպաստ մեր պետության զարգացման և առաջընթացի:

Վճարելով հարկերը՝ մենք շենացնում եք Հայաստանի Հանրապետությունը